Մրցույթ՝ ՀՀ Վայոց ձոր մարզի «Աղնջաձորի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ռուսաց լեզվի (25 դասաժամ), մաթեմատիկայի (20 դասաժամ), դասվարի (14 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլը անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է ուսումնական հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- Դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3x4 չափի:
- Բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ)
- Անձը հաստատող փաստաթուղթ
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության) դեպքում:
- Ինքնակենսագրություն (Ձև 5)
- Այլ պետության քաղաքացիները՝ ՀՀ–ում աշխատելու իրավունքը հաստատող փաստաթուղթ
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ
- Հրապարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հաստատող փաստաթուղթ (առկայության դեպքում)
- Որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հաստատող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է կրկնօրինակների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերը ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերը ընդունվում են 2025 թվականի հոկտեմբերի 23-ից մինչև նոյեմբերի 5-ը ներառյալ, ամեն օր ժամը 09:00-ից 16:00-ն, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2025 թ. նոյեմբերի 10-ին ժամը 14:00-ին ՀՀ Վայոց ձորի մարզի Աղնջաձորի միջնակարգ դպրոցում: Հասցե՝ Վայոց ձորի մարզ Եղեգիս համայնք գյուղ Աղնջաձոր փ. 5, շենք 26, հեռախոս 093 832130: